ՓԱՐԻԶԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ

- Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո հաշտության և աշխարհի վերաբաժանման հարցերը լուծվելու էին 1919թ. հունվարի 18-ին Փարիզում բացված խաղաղության վեհաժողովում:

Այդ խորհրդաժողովին հայկական պահանջների վերաբերյալ հուշագիրը ներկայացրեցին Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան և Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանը: Այդ հուշագրով նախատեսվում էր հայկական պետության սահմաններում ընդգրկել Անդրկովկասից ու Սև ծովից մինչև Միջերկրական տարածվող ընդարձակ տարածքներ:

Անշուշտ, «ծովից ծով» Հայաստանի գաղափարն ունի իր նախապատմությունը:

1912թ. նոյեմբերի 10-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ի կոնդակով[1] Պողոս Նուբար փաշան նշանակվեց եվրոպական տերությունների մոտ կաթողիկոսի լիազոր և պետք է բարձրացներ Հայկական հարցը: Այնուհետև մինչև 1921թ. Հայկական հարցի պատմությունը անմիջականորեն կապվեց Պ.Նուբարի գործունեության և ծրագրերի հետ, որոնք թե՛ դրական, թե՛ բացասական անմիջական ազդեցություն են թողել հայության ճակատագրի վրա:

Պ. Նուբարը 1912-1914թթ. հանդես էր գալիս ամենահամեստ պահանջներով: Նրա ծրագիրն ամբողջությամբ բխում էր Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի[2] և 1895թ. մայիսյան բարենորոգումների[3] սկզբունքներից: Ըստ դրա հայկական վեց նահանգների (Էրզրում, Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր, Սվազ) վալիներին կից նշանակվելու էին եվրոպացի խորհրդականներ՝ լայն լիազորություններով, վերակազմվելու էին ոստիկանությունը և դատարանները, բարեփոխվելու էր հարկային և ֆինանսական համակարգը, հետ էին վերադարձվելու հայերից զրավված հողերը, իսկ եվրոպական վեց տերությունների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովը հսկելու էր բարենորոգումների իրականացման ընթացքը:[4]

Բարենորոգումների ծրագիր կազմեց նաև Կ.Պոլսի Ապահովության խորհուրդը[5] և ուղարկեց Պ. Նուբարին: Պարզվեց, որ էական տարբերություններ կան վերջինիս և Կ.

Պոլսի ծրագրերում, որում ուրվագծվում էր ապագա ինքնավար Հայաստանի հեռանկարը: Սակայն Պ.Նուբարը վաղաժամ և անիրագործելի էր համարում այդ ծրագիրը: Միասնական ծրագիր կազմելու համար Կ. Պոլսից Փարիզ մեկնեց Ապահովության խորհրդի քարտուղար Վ. Փափազյանը: Երկարատև բանակցություններից հետո համաձայնություն կայացվեց: Ըստ դրա՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի և Սվազի վիլայեթները միավորվելու էին մեկ երկրամասի մեջ, որից դուրս էին թողնվելու մահմեդականներով բնակեցված ծայրամասային որոշ շրջաններ, սուլթանը տերությունների համաձայնությամբ նշանակելու էր եվրոպացի ընդհանուր կառավարիչ, որն ունենալու էր լայն լիազորություններ, իսկ տեղական խորհուրդներում և պաշտոններում քրիստոնեաները ու մահմեդականները ստանալու էին հավասար տեղեր:

Այդ ծրագիրն ուղարկվեց Պետերբուրգ՝ ռուսական կառավարության հավանությունը ստանալու, որից հետո պաշտոնապես ներկայացվելու էր մյուս տերություններին:[6] Սակայն ռուսական կողմը որոշեց իր ձեռքը վերցնել նախաձեռնությունը և բարենորոգումների ծրագիրն իր կողմից պաշտոնապես ներկայացրեց տերությունների քննարկմանը: Պ. Նուբարի և պատրիարքարանի կազմած ծրագիրը Կ. Պոլսի ռուսական դեսպան Մ. Գիրսի հանձնարարությամբ դեսպանատան առաջին քարտուղար Ա. Մանդելշտամն աննշան փոփոխությունների ենթարկեց, և այդ ծրագիրը[7] վեց տերությունների ներկայացուցիչների կողմից 1913թ. հուլիսի 3-23-ը քննարկվեց Եվի Քեոյում՝ Կ. Պոլսի ավստրոհունգարական դեսպանատանը: Այդ բանակցություններն արդյունք չունեցան ռուս-գերմանական հակասությունների հետևանքով: Ռուսաստանին քիչ թե շատ աջակցում էին Անգլիան և Ֆրանսիան, Գերմանիային՝ Իտալիան և Ավստրո-Հունգարիան:

Ինչպես հայտնի է, երկարատև դիվանագիտական պայքարից և բանակցություններից հետո, որում մեծ էր նաև Հայ ազգային պատվիրակության դերը, 1914թ. հունվարի 26-ին կնքվեց ռուս-թուրքական համաձայնագիր Հայկական բարենորոգումների վերաբերյալ:[8] Համաձայնագրով Արևմտյան Հայաստանը բաժանվելու էր երկու սեկտորների՝ Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր և Էրզրում, Սվազ, Տրապիզոն: Տերությունների առաջարկած թեկնածուներից սուլթանը 10 տարով նշանակելու էր ընդհանուր կառավարիչներ՝ լայն լիազորություններով: Վանի, Բիթլիսի, Էրզրումի ընդհանուր խորհուրդներում քրիստոնյաները և մահմեդականները ստանալու էին հավասար տեղեր, մյուս նահանգներում կիրառվելու էր համեմատական սկզբունքը, իսկ վարչական խորհուրդներում և պաշտոններում կիրառվելու էր հավասարության սկզբունքը: Սակայն 1914թ. օգոստոսին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, և թուրքական իշխանությունները, մի կողմ դնելով բարենորոգումների համաձայնագիրը, որոշեցին Հայկական հարցը լուծել բնաջնջելով հայ ժողովրդին:

Իրենց հերթին՝ հայ քաղաքական շրջանները հույս ունեին, որ պատերազմից հետո Արևմտյան Հայաստանին և Կիլիկիային ինքնավարություն կտրվի: Այդ հարցով Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցը 1914թ. աշնանը դիմեց Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին[9] և Նիկոլայ II-ին:[10] Իսկ 1915թ. փետրվարին Պ. Նուբարը «Պատերազմը և Կիլիկիայի հայերը» վերնագրով հուշագիր ներկայացրեց Եգիպտոսի անգլիական իշխանություններին, ուր պահանջում էր պատերազմից հետո ինքնավարություն շնորհել Հայաստանին և Կիլիկիային:[11]

1915թ. մայիսի 9-ին Ազգային պատվիրակության նախագահը ժամանեց Փարիզ, ուր Թիֆլիսի Հայ ազգային բյուրոյի ներկայացուցիչ Հ. Զավրյանի հետ կազմեց Հայաստանի ինքնավարության ծրագիր: Հ. Զավրյանը Պ. Նուբարին տեղեկացրեց, որ Ֆրանսիան և Ռուսաստանը գաղտնի համաձայնություն են կնքել, որով հաղթանակից հետո Արևմտյան Հայաստանն անցնելու էր Ռուսաստանին, իսկ Կիլիկիան՝ Ֆրանսիային, սակայն ցարական կառավարությունը զղջացել էր և հայերին ղրդում էր պահանջել Կիլիկիան՝ խոստանալով ինքնավարություն:[12] Դրա հիման վրա էլ հայ պատվիրակները առաջ քաշեցին միացյալ Հայաստանի ծրագիրը: Այդ ծրագրով ստեղծվելու էր ինքնավար Հայաստան՝ սուլթանի անվանական գերիշխանության ներքո և եվրոպացի գեներալ-նահանգապետի գլխավորությամբ: Հայաստանը գտնվելու էր Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի խնամակալության ներքո: Ինքնավար Հայաստանը ընդգրկելու էր Արևմտյան Հայաստանի վեց նահանգները և Կիլիկիան՝ Մերսին նավահանգստով, իսկ Ալեքսանդրետը դուրս էր թողնվում՝ Անգլիայի ու Ֆրանսիայի ընդդիմությունից խուսափելու համար:[13]

1916թ. մայիսին Սայքս-Պիկո-Սազոնով պայմանագրով Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը գաղտնի համաձայնություն կնքեցին պատերազմից հետո Օսմանյան կայսրության մասնատման վերաբերյալ: Հայաստանը բաժանվելու էր երկու մասի. Ռուսաստանին էին անցնելու Էրզրումի, Վանի, Բիթլիսի վիլայեթները, իսկ Ֆրանսիային՝ Սվազը, Դիարբեքիրը, Խարբերդը և Կիլիկիան: Ցարական կառավարությունը ոչ միայն հետ կանգնեց պատերազմի սկզբում հայերին տված խոստումներից, այլև որոշեց իր գրաված հայկական նահանգներում բնակեցնել ռուս և կոզակ վերաբնակիչների, իսկ հայ գաղթականներին արգելեց վերադառնալ իրենց օջախները: Ակնհայտ դարձավ, որ միացյալ Հայաստանի ստեղծման գաղափարը դատապարտված է անհաջողության: Այս պայմաններում Պ. Նուբարը որդեգրեց նոր քաղաքականություն՝ ինքնավար Հայաստան Ռուսաստանի հովանու տակ և ինքնավար Կիլիկիա՝ Ֆրանսիայի հովանու տակ: Պ. Նուբարը Ֆրանսիային անցնելիք հայկական տարածքներին ինքնավարություն տալու հարցը գլխավոր պայման համարեց, երբ Ֆրանսիան նրանից պահանջեց ստեղծել Հայկական լեգեոնը: Ֆրանսիացի քաղաքական գործիչները խոստացան ինքնավարություն տալ Կիլիկիային[14], սակայն այդ մասին պաշտոնական հայտարարություն անելուց խուսափեցին, չնայած Պ. Նուբարի բազմաթիվ դիմումներին ու բողոքներին:

1916թ. դեկտեմբերի 28-ին ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ Ժ. Պիկոն Պ. Նուբարին առաջարկեց հնարավորության սահմաններում պահանջել միացյալ Հայաստանի ստեղծում Ֆրանսիայի հովանու ներքո:[15] Այսպիսով, դերերը փոխվել էին, և այժմ Ֆրանսիան էր հայերին դրդում պահանջելու միացյալ Հայաստան, անշուշտ, իր հովանու ներքո:

Սակայն 1917թ. փետրվարյան հեղափոխությունը նոր հույսեր ներշնչեց Պ. Նուբարին: Ապրիլի 11-ին կաթողիկոսին ուղարկած նամակում Պ. Նուբարը համոզմունք էր հայտնում, որ Արևմտյան Հայաստանի ճակատագիրը լուծվելու է առաջին հերթին Ռուսաստանի լիբերալ կառավարության կողմից:[16] 1917թ. ապրիլի 27-ին Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը ստորագրեց Թուրքահայաստանի վերաբերյալ հրամանագիր, որով ռուսական բանակի գրաված հայկական տարածքները կառավարելու էր ընդհանուր կոմիսարը, որն անմիջապես ենթարկվելու էր կառա-

վարությանը:[17] Կոմիսարի քաղաքացիական գծով տեղակալ նշանակվեց Հ. Ցավդյանը, իսկ հայ գաղթականներն իրավունք ստացան վերադառնալ ավերված օջախները: Մայիսի 22-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում վարչապետ Ռիբոն հայտարարեց, որ Ֆրանսիան հրաժարվում է գաղութացման քաղաքականությունից:[18] Այդ պայմաններում Պ. Նուբարը կրկին վերադարձավ միացյալ և ինքնավար Հայաստան ստեղծելու գաղափարին, որից ժամանակին ստիպված էր եղել հրաժարվել: Միացյալ Հայաստան ասելով նա նկատի ուներ Արևմտյան Հայաստանի վեց նահանգներն ու Կիլիկիան: Նա անհրաժեշտ էր համարում Հայաստանը դնել Անտանտի երկրների ընդհանուր հովանու ներքո, իսկ նրանցից մեկը (գերադասելի էր համարում Միացյալ Նահանգները) պետք է 10-15 տարով ստանձներ երկրի մանդատը՝ պաշտպանելու արտաքին հարձակումներից և աջակցելու քայքայված տնտեսության վերականգնմանը:[19] Այդ ոգով էր խմբագրված 1917թ. մայիսի 24-ին Պ. Նուբարի կողմից դաշնակիցներին ուղղված հուշագիրը՝ «Հուշաթերթ Հայկական հարցի և Հայաստանի ազատագրման վերաբերյալ»:[20]

1918թ. հոկտեմբերին արդեն պարզ էր պատերազմում Թուրքիայի պարտությունը, օրակարգում էր նրա կապիտուլացման հարցը: Հոկտեմբերի 29-ին Պ.Նուբարը դիմեց Անտանտի երկրներին, որպեսզի հայերին ճանաչեն պատերազմող կողմ. «Ազգ[ային] Պատուիրակութիւնը կը կարծէ թէ թափուած արիւնը հարիւր հազարաւոր Հայերուն, որոնք ջարդուեցան Համաձայնականներու դատին հաւատարիմ մնալու համար և մերժած ըլլալնուն համար Թուրքաց կողմէ եղած առաջարկները, որով անոնց կը խոստացուէր անկախութիւն՝ ի վարձատրութիւն Դաշնակիցներու դէմ ըլլալիք աջակցութեան, նաև բոլոր զոհողութիւնները, որոնց ենթարկուեցան Հայերը կամատրապէս՝ պայքարելով Ֆրանսայի, Պաղեստինի, Հայաստանի և Կովկասի ճակատներուն վրայ, ոչ միայն կ'արդարացնեն իրը պատերազմիկ ազգ ընդունուելու իրենց պահանջքը, այլև առ այդ իրենց իրաւունք կուտան»[21],- գրում էր Պ. Նուբարը:

1918թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում կնքվեց զինադադարի պայմանագիր Դաշնակիցների և պարտված Թուրքիայի միջև:[22] Նոյեմբերին Պ. Նուբարը ֆրանսիական մամուլին տված հարցազրույցում ներկայացրեց այն սկզբունքները, որոնց հիման վրա պետք է լուծվեր Հայկական հարցը՝ 1. Այլևս ոչ մի կապ թուրքական պետության հետ, 2. Հայկական պետությունը ունենալու է հանրապետական վարչաձև և գտնվելու է ազատարար ազգերի պաշտպանության ներքո, որոնցից մեկը ստանձնելու է Հայաստանի խնամակալությունը մինչև այն կազմակերպվի և կարողանա ինքնուրույն գոյատևել, 3. Հայաստանի մեջ են մտնելու վեց վիլայեթները և Կիլիկիան: Պ. Նուբարը նշեց ռուսական Հայաստանի նկատմամբ որևէ պահանջ չունենալու մասին, սակայն հույս հայտնեց, որ նոր սկզբունքներ որդեգրած Ռուսաստանը, որը հայտարարել է լեհական ու ֆինլանդական խնդիրները լուծելու մասին, այս հարցում ևս արդարացի մոտեցում կցուցաբերի:[23]

Այդ սկզբունքները Պ. Նուբարը զարգացրեց դեկտեմբերին հրապարակած «Հայկական հարցի մասին» հուշագրում:[24] Նա անհրաժեշտ էր համարում վեց վիլայեթներից, Կիլիկիայից ու Մարաշի սանջակից կազմել հայկական պետություն, որը մինչև վերջնական կազմակերպվելը կդրվի որևէ տերության խնամակալության տակ: Պ. Նուբարը նշում էր, որ այդ

պետությանը կմիանա նաև Արարատյան Հանրապետությունը, և Հայաստանը պատնեշ կհանդիսանա պանթուրքիզմի դեմ: Խնդրի բարոյական կողմին անդրադառնալով, նա անհավանական էր համարում, որ Եվրոպայի ու Ամերիկայի ժողովրդավարները թույլ կտան որ «հաղթանակի Աբդուլ Համիդի, Էնվերի ու Թալեաթի «քաղաքականությունը»՝ Հայկական հարցը ոչնչացնել բնաջնջելով հայ ժողովրդին»:[25]

1918թ. նոյեմբերի 30-ին Պ. Նուբարը Փարիզում հանդես եկավ «Ամբողջական Հայաստանի» անկախության մասին հայտարարությամբ, ուր, մասնավորապես նշվում է. «...Հայ ազգը ունի մշակույթի և քաղաքակրթության աստիճանը որ իրեն իրաւունք տայ ինքզինքը կառավարելու: ...Հետեւաբար, համաձայն միակամ փափաքին հանուր Հայ ազգին, որուն մէկ մասը արդէն Անկախ Հանրապետութիւն մը կազմած է, Ազգ(ային) Պատուիրակութիւնը ...կը յայտարարէ Ամբողջական Հայաստանի Անկախութիւնը Դաշնակից Պետութեանց և Միաց. Նահանգներու պաշտպանութեան տակ և կամ Ազգերու Դաշնակցութեան՝ անմիջապէս որ ան կազմուի»:[26] La Voix de l'Armenie թերթում տպագրած հոդվածում Պ. Նուբարը կրկին շեշտում էր Թուրքա- և Ռուսա-Հայաստանների միավորմամբ Միացյալ Հայաստանի ստեղծման կենսական անհրաժեշտությունը: «Հայաստանը պետք է ըլլայ մէկ, ամբողջ, ազատ, անկախ,- գրում էր նա,- այս է ահա Հայ արիւնոտ դատի միակ արդար լուծման միակ հաստատուն գրավականը»:[27]

Այսպիսով, Պ. Նուբարը առաջ քաշեց «ծովից ծով» Հայաստանի գաղափարը, որը նրա կարծիքով կարող էր իրականություն դառնալ Դաշնակիցների և, առաջին հերթին, Միացյալ Նահանգների աջակցությամբ, քանի որ վերջինս համարվում էր Հայաստանի մանդատի գլխավոր թեկնածուն: Պ. Նուբարը դեռ հավատում էր մեծ տերությունների ազնվությանն ու մարդասիրությանը, չնայած այդ տերությունների ղեկավարներն արդեն արգելել էին Ազգային պատվիրակությանը մասնակցել Փարիզի հաշտության վեհաժողովին, իսկ զինադադարի պայմանագրով Հայաստանը թողել էին թուրքերի վերահսկողության տակ:[28]

Ավելի համեստ և հայ ժողովրդի տվյալ պահի հնարավորություններից բխող պահանջներով էին հանդես գալիս Հայաստանի Հանրապետության վարիչները: ՀՀ կառավարությունը Փարիզ ուղարկեց պատվիրակություն՝ հասարակական-քաղաքական գործիչ, գրող Ա. Ահարոնյանի գլխավորությամբ, որի առջև խնդիր էր դրված՝ պահանջել Հայաստանի սահմաններում ընդգրկել Անդրկովկասի հայկական տարածքները, Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սվազի վիլայեթները և ելք դեպի Սև ծով: Եթե չհաջողվեր ապահովել այդ սահմանները, ապա պետք է հրաժարվեին Խարբերդի, Դիարբեքիրի, Սվազի վիլայեթներից, Գանձակի ու Թիֆլիսի որոշ շրջաններից, սակայն ծովային ելքն անհրաժեշտ էր համարվում: Մանդատը զերադասելի էր համարվում հանձնել այնպիսի պետության, որը շատ չէր միջամտի երկրի գործերին:[29]

Ինչպես տեսնում ենք, ՀՀ իշխանությունները չէին պահանջում Կիլիկիան: Դա ուներ մի քանի պատճառ. նախ Կիլիկիան գտնվում էր Ֆրանսիայի ազդեցության գոտում, և վերջինս այն չէր զիջի Հայաստանին, երկրորդ՝ Եղեռնից արյունաքամ հայ ժողովուրդը չէր կարող իր ուժերով ազատագրել և պահել այդքան մեծ տարածքներ: Սակայն Ա.Ահարոնյանը, 1919թ. փետրվարին ժամանելով Փարիզ, համակերպվեց Պ. Նուբարի «ծովից ծով» պահանջներին և ՀՀ արտգործնախարարին ուղարկած նամա-

կում դա պատճառաբանեց հետևյալ կերպ. 1. բոլոր թուրքահայերն ու Պ. Նուբարը առանց Կիլիկիայի Հայաստան ըմբռնել չեն ուզում, և եթե ինքը չհամաձայնվի, ապա պառակտումն անխուսափելի կլինի, 2. Ամերիկան միայն Կիլիկիայի միջոցով կարող է օգնել Հայաստանին, քանի որ Սև ծովի ափին հարմար նավահանգիստ չկա, 3. եթե Կիլիկիան մնա Ֆրանսիային, ապա վերջինս այն կկցի Սիրիային, և բավականին ստվար հայություն կկտրվի հայրենիքից, 4. հայության փրկված հատվածի մեծ մասը կիլիկիացի կամ սուետիացի է և ոչ մի պայմանով նրանք չեն գնա խոպան ու ավեր Հայկական լեռնաստանը: Պոլսի, Զմյուռնիայի և Եգիպտոսի հայերը նույնպես միայն Կիլիկիա կգնան: Բացի այդ՝ ոչ մի պետություն, Կիլիկիայից բացի, ֆինանսական ներդրումներ չի կատարի Հայաստանում, ուր ուշադրության արժանի ոչինչ չկա:[30]

Պ. Նուբարը և Ա. Ահարոնյանը փետրվարի 25-ին ներկայացան Փարիզի վեհաժողովին:[31] Պ. Նուբարը հրավիրագիր չէր ստացել և միայն անգլիական պատվիրակության միջնորդությամբ մասնակցեց Տասի խորհրդի նիստին: Նիստում նախագահում էր Ֆրանսիայի արտգործնախարար Ս. Պիշոնը[32], Ամերիկայի ներկայացուցիչներն էին Լանսինգը և Ուայթը, Անգլիայինը՝ Բալֆուրը և Հարդինգը, Իտալիայինը՝ Սոնինոն և մարկիզ Ռաջչին, ինչպես նաև Ճապոնիայի երկու ներկայացուցիչ:[33] Հայ պատվիրակները ներկաներին բաժանեցին հայկական պահանջների վերաբերյալ հուշագիր[34], ուր շարադրված էր Հայկական հարցի համառոտ պատմությունը և պատվիրակության՝ հաշտության կոնֆերանսից ակնկալիքները: Ըստ հուշագրի Հայաստանն ընդգրկելու էր հետևյալ տարածքները.

1. Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Էրզրում, Սվազ և Տրապիզոն վիլայեթները, առանց Տիգրիսից հարավ և Օրդու - Սվազ գծից արևմուտք ընկած շրջանների.

2. Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշ, Խոզան (Սիս), Ջեբել-Բերեքեթ և Աղանա՝ Ալեքսանդրետ նավահանգստով.

3. Կովկասի Հայկական Հանրապետության տարածքը՝ Երևանի նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Գանձակի նահանգի հարավ-արևմտյան մասը, Կարսի նահանգը՝ առանց Արդահանից հյուսիս ընկած շրջանի:

Նշվում էր, որ չպետք է հաշվի առնել ցեղասպանության հետևանքով հայերի թվի նվազումը Հայաստանում: «Անթոյլատրելի է, որ ոճիրներից օգուտ քաղեն նրանց հեղինակները և նրանք հասնեն իրենց հրէշատր ծրագրի նպատակին - ապահովել մահմեդականների մեծամասնությունն ու գերակայությունը»:[35] Մատնանշվում էր, որ բացի բարոյականից կա նաև գործնական կողմ. «Հայերը միակ տարրն են, որ ի վիճակի են այժմ քաղաքակրթութեան և պրոգրեսի ընդունակ մի պետութիւն կազմելու»:[36] Անհրաժեշտ էր համարվում որևէ պետության աջակցությունը երկրի կազմակերպման, տնտեսական ու ֆինանսական վերականգնման գործում: Սակայն այդ օժանդակությունը չպետք է պրոտեկտորատի ձևով լիներ, և մանդատը տրվելու էր առավելագույնը՝ 20 տարով: Նաև պահանջվում էր վնասների հատուցում Թուրքիայից:

Ա. Ահարոնյանը զեկուցեց Հայաստանի Հանրապետության վիճակի և պահանջների մասին: Պ. Նուբարն իր զեկույցում ցույց տվեց, որ պատերազմում հայերի թվի բռնի նվազումը պատճառ չէ, որ Հայաստանում հայերը փոքրամասնություն համարվեն և, հատկապես, ծանրացավ Կիլի-

կիայի խնդրի վրա: Զեկույցը կազմելու գործում նրան աջակցել էր Վիկտոր Բերարը: Հայկական հուշագրի, Պ. Նուբարի և Ա. Ահարոնյանի զեկույցների առթիվ Տասի խորհրդում հարցեր չծագեցին:

Ապրիլի 17-ին Պ.Նուբարն ու Ա. Ահարոնյանը հանդիպեցին Միացյալ Նահանգների նախագահ Վ.Վիլսոնի հետ: Վերջինս նշեց, որ եթե Ամերիկան որևէ մանդատ վերցնի, ապա դա կլինի Հայաստանինը, և խոստացավ, որ Հայաստանի սահմանները կլինեն մոտավորապես հայկական պահանջներին համապատասխան:[37]

Սակայն տերությունները խոստումներից այն կողմ չանցան: Նրանց ավելի շատ հետաքրքրում էր գերմանական խնդիրը և Հայկական հարցով, թվում է թե, զբաղվելու ժամանակ չունեին:

Հայկական պահանջները խիստ ընդդիմության հանդիպեցին Ֆրանսիայի կողմից, որը ձգտում էր Կիլիկիան միացնել Սիրիային: Երբ 1919թ. փետրվարի 15-ին Ա. Ահարոնյանը տեսակցեց Փարիզի Temps թերթի խմբագիր Հերբետի հետ, վերջինս նշեց, որ Ֆրանսիան երբեք չի հրաժարվի Կիլիկիայից, իսկ հայկական պահանջները որակեց «իմպերիալիստական հովեր»:[38] Մարտի 1-ին Պ. Նուբարի հետ հանդիպման ժամանակ Le Matin-ի խմբագիրը նույնպես դժգոհություն հայտնեց հայերի կողմից Կիլիկիան և, հատկապես, Ալեքսանդրետի նավահանգիստը պահանջելու առթիվ:[39]

Կիլիկիան պահանջելու հարցում հայերին խրախուսում էր Միացյալ Նահանգները, որը Հայաստանի մանդատի հիմնական հավակնորդն էր: Սակայն Ամերիկան խոստումներից այն կողմ չանցավ և ո՛չ դրամ, ո՛չ էլ զորք հատկացրեց Հայաստանին օժանդակելու համար: Անգլիան աղքատ և ավերված Հայաստանում շահեր չուներ, և 1919թ. ամռանից սկսեց այնտեղից դուրս բերել իր զորքերը: Ֆրանսիան սկզբնական շրջանում ձգտում էր ձեռք բերել Հայաստանի մանդատը, սակայն հայերը գերադասեցին ամերիկյան աջակցությունը, և Ֆրանսիան որդեգրեց Կիլիկիան Սիրիային միացնելու կողմնորոշումը: Իտալիան ևս հրաժարվեց Հայաստանի մանդատից, իսկ Ռուսաստանը զբաղված էր ներքին քաղաքացիական պատերազմով:

Այսպիսով, Հայաստանին աջակցող որևէ պետություն չգտնվեց, և 1919թ. վերջերին պարզ դարձավ, որ տերությունները ո՛չ դրամ, ո՛չ էլ զորք կտրամադրեն հայերին: Դա հատկապես վառ արտահայտվեց, երբ անգլիական զորքերը սկսեցին հեռանալ Հայաստանից, և ոչ մի երկիր, չնայած հայերի խնդրանքներին և սպասվող կոտորածների վտանգին, չցանկացավ դրանց փոխարինել: Տերությունները նաև հրաժարվեցին զենք և սպաներ տրամադրել հայկական բանակին:

Ի վերջո, հայ պատվիրակները հասկացան «ծովից ծով» Հայաստանի գաղափարի անիրական լինելը, և 1920թ. փետրվարին Լոնդոնի կոնֆերանսում Պ. Նուբարն ու Ա. Ահարոնյանը արդեն չէին պահանջում Կիլիկիան, այլ բավարարվում էին միայն այդ երկրամասի համար ինքնավարություն պահանջելով Ֆրանսիայի հովանու ներքո:[40]

Մարտի 16-ին Մահմանագծման հանձնաժողովը հայկական կողմին տեղեկացրեց, որ Հայաստանը դրվելու է Ազգերի լիգայի հովանու տակ, քանի որ ոչ մի պետություն չէր համաձայնվել վերցնել մանդատը, իսկ հայերը պետք է բավարարվեին Հայաստանի Հանրապետությանը միավորելով Վանը, Բիթլիսը, Մուշը և Էրզրումը՝ առանց հասնելու

Երգնկային: Իսկ ապրիլի 18-24-ը Սան Ռեմոյի խորհրդաժողովում Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջն ու Իտալիայի վարչապետ Նիտտին կասկածի տակ դրեցին նաև Էրզրումի՝ Հայաստանին միավորելու հավանականությունը: Պ. Նուբարը և Ա. Ահարոնյանը մեծ ջանքեր գործադրեցին, որպեսզի համոզեն Էրզրումը տալ Հայաստանին: Ի վերջո, ապրիլի 24-ին տերությունների ղեկավարները որոշեցին Հայաստանի մանդատն առաջարկել Ամերիկային, և ԱՄՆ-ի պրեզիդենտին էր թողնվում Հայաստանի սահմանների ճշտումը՝ Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների սահմաններում:

1920թ. հունիսի 1-ին ամերիկյան Սենատը 52 կողմ 23 դեմ ձայներով բանաձև ընդունեց Հայաստանի մանդատը մերժելու մասին:[41] Այսպիսով, Ամերիկայի հետ հայերի կապած հույսերը հօդս ցնդեցին:

Հետագայում Լ.Ջորջը քննադատեց Սան Ռեմոյում «Պողոսի կախարդական հեքիաթները» և Ահարոնյանի «կույր լավատեսությունը»:[42] «Դժվար էր պատկերացնել հայկական դիրքերի անհուսալիության և անհոգ անփութության ավելի վառ ապացույց,- գրում է Լ.Ջորջը,- քան այն, թե ինչպիսի հայտարարություններով էին հանդես գալիս վերին աստիճանի տաղանդավոր այդ ժողովրդի ականավոր ներկայացուցիչները, որոնցից կախված էր նրա ապագան որպես անկախ ազգ»:[43]

Ինչպես հայտնի է՝ 1920թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սևր արվարձանում հաշտության պայմանագիր կնքվեց Դաշնակից պետությունների և Օսմանյան կայսրության միջև, պայմանագիր, որին հայ ժողովուրդը սպասում էր պատերազմում Թուրքիայի պարտությունից ու զինադադարի կնքումից ի վեր: Պայմանագիրը ստորագրեց նաև ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը: Ըստ դրա Հայաստանի և Թուրքիայի սահմանագիծը որոշելու էր ԱՄՆ նախագահ Վիլսոնը, և այն անցնելու էր Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի, Վանի վիլայեթներով:[44]

Պայմանագրով հայկական ընդարձակ տարածքներ թողնվեցին թուրքերին, այդ թվում՝ Կիլիկիան, ուր վերադարձել և նոր կյանք էին սկսել տասնյակ հազարավոր հայեր՝ հավատալով Ֆրանսիայի խոստումներին: Օգոստոսի 14-ին Պ. Նուբարը նոտա հղեց Խաղաղության վեհաժողովի նախագահ Միլերանին:[45] Նա բողոքեց Կիլիկիան և Խարբերդը թուրքերին թողնելու առթիվ, պահանջեց այդ տարածքները հանձնել Ֆրանսիայի հովանավորությանը և նշեց, որ Հայ ազգային պատվիրակությունը չի դադարելու պահանջել այդ տարածքները: Սակայն Պ. Նուբարի բողոքի նոտան բնականաբար անուշադրության մատնվեց:

Կիլիկիայում ինքնավարություն ստանալու քաղաքականությունը խրախուսում էին անգլիացի որոշ քաղաքագետներ, որոնք անհույս էին համարում Արևմտյան Հայաստանի ազատագրումը և նույնիսկ Ազգային պատվիրակությանը մինչև Սևրի պայմանագիրը խորհուրդ էին տալիս հայության բեկորները համախմբել Կիլիկիայում և ֆրանսիական մանդատի ներքո կազմել «ազգային բույն մը»:[46] Ի դեպ՝ 1921թ. փետրվարի 17-ին Անգլիայի ԱԳՆ-ում կազմված մի փաստաթղթում նախատեսվում էր Հայաստանին հանձնել միայն մինչև 1914թ. ռուս-թուրքական սահմանները, իսկ արևմտահայերին տեղավորել Կիլիկիայում, ուր պետք է ինքնավարություն տրվեր հայերին՝ Թուրքիայի գերիշխանության և Ազգերի լիգայի հովանու ներքո:[47]

Սևրի պայմանագիրը, ընդհանուր առմամբ, խանդավառությամբ ըն-

դունվեց հայերի կողմից, քանի որ դրանով Հայաստանին տրվում էր հետագա զարգացման համար անհրաժեշտ կենսատարածքներ և ծովային ելք:

Սակայն այդ պայմանագիրն արդեն ուշացած էր, և նրա պայմաններն իրականություն դարձնելու հնարավորություն չկար, քանի որ Թուրքիայում սկսվել և մեծ թափ էր ստացել քեմալական շարժումը: Չերչիլը Սևրի պայմանագրի մասին նշում է. «13 ամիս նախապատրաստվող այդ փաստաթուղթը հնացավ ավելի շուտ, քան պատրաստ էր»:[48]

1921թ. փետրվարի 26-ին Պ. Նուբարն ու Ահարոնյանը Լոնդոնի խորհրդաժողովից պահանջեցին պահպանել Սևրի համաձայնագրի դրույթները ու նաև՝ Կիլիկիային ինքնավարություն շնորհել:[49] Դա քաղաքական ռոմանտիզմի վառ դրսևորում էր:

Մարտի 4-ին Լոնդոնի խորհրդաժողովը որոշեց փոփոխություններ մտցնել Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերվող մասում, և Թուրքիային առաջարկվեց իր արևելյան տարածքների վրա կազմել հայկական «Ազգային տուն», որի սահմանները որոշելու էր Ազգերի լիգայի կազմած հանձնաժողովը:[50] «Լոնտոնի մէջ Հայերուն տրուելիք «Ազգային Տուն»ը կու գար քանդելու Սէվրի մէջ տրուած «Միացեալ եւ անկախ Հայաստան»ի օդակառույց շէնքը»[51],- գրում է ռամկավար Ա. Դարբինյանը:

Փաստորեն՝ դաշնակիցները հայերին միացյալ Հայաստանի փոխարեն Լոնդոնում առաջարկեցին «Ազգային տուն» Թուրքիայի «արևելյան վիլայեթներում»: Սակայն այդ չափազանց համեստ ծրագիրը ևս մնաց թղթի վրա՝ թուրքերի ընդդիմության հետևանքով:

Ինչպես նշում է բազմավաստակ պատմաբան Գ. Գալոյանը «Լոնդոնի դաշնակցային խորհրդաժողովը ըստ էության չեղյալ հայտարարեց Սևրի պայմանագիրը, չնայած այն իր պաշտոնական ձևակերպումը գտավ միայն Լոզանի խորհրդաժողովում»:[52]

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 27, թ. 1-2:

[2] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության վաստաթղթերում (1828-1923), խմբագիր Կիրակոսյան Ջ. Ս., Երևան, 1972, էջ 128:

[3] Նշվ աշխ., էջ 130-148:

[4] Օտեան Ե. Պօղոս փաշա Նուպար, Կ. Պոլիս, 1913, էջ 63:

[5] *Ապահովության խորհուրդը կազմավորվեց 1912թ. դեկտեմբերին և գործում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքի նախագահությամբ: Նրա նպատակն էր՝ համակարգված կերպով հետապնդել և իրագործել Հայկական բարենորոգումների խնդիրը:*

[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 35:

[7] Լէո. Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 314-329:

[8] Ժողովածու դիպլոմատիքական դոկումենտների: Բարենորոգումները Հայաստանում 1912թ. Նոյեմբեր 12-ից մինչեւ 10 Մայիս 1914թ., թարգմ. Ս. Աւագեան, Թիֆլիս, 1915, էջ 102-104:

[9] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна. Ереван, 1983, ст. 275-276.

[10] Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 372:

[11] Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents. Edited and translated by Vatche Ghazarian. Waitham, 1996, p. 3-5.

[12] ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 9:

[13] Boghos Nubar's Papers. p. 80-84.
[14] Նույն տեղում, էջ 372-374.
[15] Նույն տեղում, էջ 422-424.
[16] Նույն տեղում, էջ 432-433:
[17] Վրացյան Ս. Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 26-27:
[18] Boghos Nubar's Papers, p. 437.
[19] Նույն տեղում, էջ 438:
[20] ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 14-15: Նաև՝ Մելիքյան Վ. Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը և Հայկական հարցը 1917թ., ՊԲՀ, Երևան, 1994, թիվ 1-2, էջ 130:
[21] Ամեմեան Լ. Եգիպտահայ տարեցոյց 1925, Աղեքսանդրիա, 1924, էջ 87:
[22] Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 537-539:
[23] Վերածնունդ, Փարիզ, 14 նոյեմբեր, 1918, թիւ 21-22: Ճակատամարտ, Կ.Պոլիս, 6 յունվար, 1919, թիւ 43:
[24] Memorandum on The Armenian Question. Presented by the Armenian National Delegation. Paris. 1918.
[25] Նույն տեղում, էջ 7-8:
[26] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 282, ց. 1, գ. 46, թ. 1: Ամեմեան Լ. Եգիպտահայ տարեցոյց 1925, Աղեքսանդրիա, 1924, էջ 89-91:
[27] Ճակատամարտ, Կ.Պոլիս, յունվար, 1919, թիւ 40:
[28] Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 537-539:
[29] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 10-12:
[30] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 154-155: Նույնը, ց. 2, գ. 47, թ. 2-3:
[31] Ահարոնյան Ա. Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Երևան, 2001, էջ 14-16:
[32] *Փարիզի կոնֆերանսի նախագահն էր Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանսոն, սակայն նա դեռ չէր կազդուրվել երկու շաբաթ առաջ իր դեմ կատարված մահափորձից հետո:*
[33] *Նրանց անունները ճշտել մեզ չհաջողվեց:*
[34] Տես՝ «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր» հանդեսի ներկա (2002թ. N6, էջ) և նախորդ (2002թ. N5, էջ 154-167) հրապարակումները, նաև՝ Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ, Թիֆլիս, 1919:
[35] Նույն տեղում, էջ 7:
[36] Նույն տեղում:
[37] ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 200, ց. 2, գ. 49, թ. 1: Նաև՝ Ահարոնյան Ա. Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Երևան, 2001, էջ 23-24:
[38] Ահարոնյան Ա. Նշված աշխ., էջ 11-12:
[39] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թ. 28:
[40] ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 57, ց. 5, գ. 215, թ. 1-2: Նաև՝ Ահարոնյան Ա. Նշվ. աշխ., էջ 59-63:
[41] Եսայան Ա. «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965, էջ 194:
[42] Ллойд Джордж. Правда о мирных доховорах, т. 2, Москва, 1957, стр. 433-438.
[43] Նույն տեղում, էջ 437:
[44] Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում, էջ 676-677:
[45] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 224, թ. 12: Նաև՝ «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1920, հոկտեմբեր 6, թիւ 2566:
[46] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 282, ց.1, գ.54, թ.2:
[47] Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում, էջ 696:
[48] Черчиль В. Мировой кризис, М – Л., 1932, стр. 258.:
[49] Ահարոնյան Ա. Նշվ. աշխ., էջ 146-152: Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում, էջ 697-704:
[50] Դարբինեան Ա. Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 479-480:

[51] Նույն տեղում, էջ 480:
[52] Գալոյան Գ. Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999, էջ 435:

Резюме

Армянский меморандум Парижского конгресса и его последующая судьба.

Самвел Погосян

В феврале 1919г. председатель Армянской национальной делегации П. Нубар и председатель Делегации Республики Армения А. Агаронян представили Парижской Мирной конференции референдум об армянских требованиях. Они предполагали в границах Армении включить армянские территории Закавказья, 6 вилайетов Западной Армении – с выходом к Черному морю и Киликию. Автор идеи создания Армении с этими границами был П. Нубар, с чем в конечном счете согласился и А. Агаронян, несмотря на то, что в данных ему указаниях Армянского правительства Киликия не числилась. После долгих обсуждений державы 10 августа 1920г. заключили мир с Османской империей, согласно которому в состав Армении должны входить вилайеты Ван, Битлис и Эрзерум и часть вилайета Трапизон.

Однако Турция не только не отдала эти территории Армении, но и захватила Карс и Сурмалу. Лондонская конференция 1921г. вместо статей ов Армении Севрского договора приняла решение предоставить армянам "Национальный очаг" в восточных вилайетах Турции, этим же свела на нет Севрские договоренности. Это обстоятельство, получило свое официальные подтверждение на Лозанской конференции 1923г.

Summary

The Armenian Memorandum of the Paris Congress and its Further Fate.

Samuel Poghosian

In February 1919, the Head of the Armenian national delegation Boghos Nubar and the Head of the Armenian Republic delegation Avetis Aharonian presented Memorandum about Armenian demands to Paris Peace Conference. They demanded to include the Armenian territories of Transcaucasia, six vilayets of Western Armenia with entrance to Black Sea and Cilikia in the borders of Armenia. The main defender of the idea of forming Armenia with that borders was Nubar, with whom agreed also Aharonian though the Cilikia wasn't included in the instruction by the powers of the Armenian Republic. After long discussions the Powers signed peace agreement with Ottoman Empire in the 10th of August 1920, according which they gave Armenia some parts of vilayets of Van, Erzrum, Bitlis and Trapezoon but the strongest Kemal Turkey not only gave those territories to Armenia he occupied Kars and Surmalu. In 1921 London Conference crossed the articles of Sevr agreement about Armenia and decided to give the Armenians "a national home" in the eastern vilayets of Turkey. And in 1923 Lozan Confernce crossed the Armenian Question.